5261

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«07» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 113 - 25

Նախաձեռնող՝ ***«Ա. Գ. Ա. Սթոն» ՍՊԸ***
Անի համայնք, Հրանտ Շահինյան փողոց, տ. 17

Գործունեությունը՝ ***Անի համայնքի Գուսանագյուղի տուֆերի երևակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրություն***
Շիրակի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 113 - 25
« 07 » մայիս 2025թ.

Գուսանագյուղի տուֆերի երևակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Ա. Գ. Ա. Սթոն» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, Ծրագիր
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, Անի համայնք, Գուսանագյուղ բնակավայր

Ներածական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությամբ /այսուհետ՝ Հաշվետվություն/ «Ա. Գ. Ա. Սթոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից նախատեսվում է 2025-2027թթ. ընթացքում Շիրակի մարզի Գուսանագյուղի տուֆերի երևակման տեղամասում իրականացնել երկրաբանական ուսումնասիրություն: Նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթակա՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի և հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է իրականացնել A արդյունաբերական կարգով օգտակար հանածոյի պաշարների հաշվարկում (շինարարական քար) հետագայում շահագործելու համար: Տուֆերի որակական հատկանիշները պետք է համապատասխանեն ԳՈՍ 4001-2013 «Պատքարեր լեռնային ապարներից» և ՀՍ 100-95 «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից», իսկ թափոնները ԳՈՍ 22263-76 «Խիճ և ավազ ծակոտկեն լեռնային ապարներից» տեխնիկական պահանջներին:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության համար դիտարկվող տարածքը գտնվում է Շիրակի մարզի Գուսանագյուղ համայնքի վարչական տարածքում, Գուսանագյուղ գյուղի կենտրոնից 1.2 կմ դեպի հարավ-արևելք: Գյուղի մոտակա բնակելի շինությունները գտնվում են հայցվող տարածքից նվազագույնը 253 մ, գյուղատնտեսական արտադրական համալիրից (ջերմոցներ) 115 մ հեռավորության վրա: Մոտակա բնակավայրերը հանքերևակման տեղամասի հետ կապված են ասֆալտապատ և գրունտային ճանապարհներով: Հ-21 հանրապետական նշանակության ավտոճանապարհը գտնվում է երևակման տարածքից մոտ 1.4 կմ, Հ-75 ավտոճանապարհը՝ մոտ 3.6 կմ հեռավորությունների վրա: Տեղամասը տեղակայված է 1490-1520 մ բացարձակ բարձրությունների վրա և զբաղեցնում է 15.39 հա տարածք, ինչը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերով:

Երևակման հարակից տարածքներում շահագործվող հանքավայրեր չկան:

Մորֆոլոգիական տեսակետից հանքերևակման տեղամասը հանդիսանում է Արագածի լեռան նախալեռնային շրջանի մի մասը, ունի հարթավայրաբլրային ռելիեֆ և բնութագրվում է խորը կտրտված կիրճերով ու հեղեղատներով, սակավ խոտաբուսական

ծածկով: Մակերևույթը խիստ քարքարոտ է: Շրջանի ջրագրական ցանցը թույլ է զարգացած: Հիմնական ջրագրական միավորը սահմանային Ախուրյան գետն է, որը հոսում է խոր կիրճով՝ հայցվող տարածքից մոտ 6-7 կմ արևմուտք:

Գուսանագյուղի տուֆերի հանքերևակման երկրաբանական կառուցվածքը բավականին պարզ է: Ըստ ֆոնդային նյութերի տվյալների՝ դրանում մասնակցում են անդեզիտադացիտները, դացիտային տուֆերը, հրաբխային տուֆերը, ժամանակակից նստվածքները: Ժամանակակից առաջացումների հզորությունը կազմում է մոտ 0.15-0.30 մ, հողաբուսաշերտի միջին հզորությունը՝ մոտ 0.10 մ:

Երևակման տարածքում տեկտոնական խախտումներ, սողանքներ, փլուզումներ և այլ բնույթի գեոդինամիկ երևույթներ չեն արձանագրվել:

Ուսումնասիրվող տեղամասում բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը, բնության հուշարձանները, հատուկ պահպանվող և ընդհանուր օգտագործման տարածքները: Հարակից տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանը գտնվում է 570 մ հեռավորության վրա: Համաձայն հաշվետվության՝ հայցվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն դիտարկվել:

Հայցվող տարածքի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ 40° 47'52''-հյուսիսային լայնության, 43° 39'15''արևելյան երկայնության:

Հայցվող տարածքը սահմանափակվում է հետևյալ ծայրակետային կոորդինատներով՝ ըստ WGS-84 (ARMREF-02) համակարգի.

1. Y =8398150.0 X =4502700.0
2. X=8398150.0 Y=4502960.0
3. X=8398200.0 Y=4502960.0
4. X=8398200.0 Y=4503100.0
5. X=8398300.0 Y=4503200.0
6. X=8398275.0 Y=4503250.0
7. X=8398370.0 Y=4503250.0
8. X=8398460.0 Y=4502970.0
9. X=8398460.0 Y=4502750.0
10. X=8398550.0 Y=4502550.0
11. X=8398425.0 Y=4502550.0
12. X=8398350.0 Y=4502700.0

Հետախուզումն իրականացվելու է 12-24.0 մ խորությամբ 18 հորատանցքերով, փորձնական բացահանքի անցմամբ, նմուշարկման զուգորդությամբ, որոնց միջոցով կուսումնասիրվի և կնմուշարկվի տուֆերի հաստվածքը: Հետախուզական փորվածքների միջև հեռավորությունը 50-200 մ է, որը թույլ կտա պաշարները հաշվարկել և գնահատել արդյունաբերական A կարգով:

Յուրաքանչյուր հետախուզագծի վրա հորատանցքերի միջոցով օգտակար հաստվածքը կուսումնասիրվի ամբողջ հզորությամբ: Նախատեսվում է տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ, ինչպես նաև փորձնական բացահանքի անցում, նմուշարկում, ֆիզիկամեխանիկական լաբորատոր փորձարկումներ և ուսումնասիրություններ:

Սույն նախագծով նախատեսվում է կատարել տեղամասի տարածքի 1:2000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 15.39 հա մակերեսով տարածքում:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Դրանց ծավալները հետևյալն են ըստ տեսակների.

- հորատահանուկի փաստագրում - 287.0 գծ.մ,
- փորձնական բացահանքի փաստագրում - 30.0 գծ.մ,

Ընդամենը - 317 գծ.մ:

Տուֆերի լեռնային զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում տեղամասի կենտրոնական մասում: Փորձնական բացահանքի անցման ժամանակ առաջանալու է 315 մ³ լեռանային զանգված, այդ թվում լանջային փուխր նստվածքներ՝ հողաբուսական շերտի հատուկուրդով 19,8 մ³, որից հողաբուսական շերտի ծավալը կազմելու է 9,0 մ³, փուչուան՝ 276,4 մ³, օգտակար զանգվածը՝

97 մ³: Այս ծավալները կհեռացվեն և առանձին կկուտակվեն բացահանքի անմիջական հարևանությամբ, հետագայում կօգտագործվեն ռեկուլտիվացիայի աշխատանքների համար:

Տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է հորատել 18 հորատանցք՝ 12-24 մ խորությամբ, ընդհանուր 287.0 մ ծավալով: Հորատումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված խմբի կողմից POLE-HOLE DIGGER հորատող հաստոցով կարծր համա-ձուլվածքային թագիկներով, 136 մմ նախնական և 93 մմ վերջնական տրամագծով: Օգտակար հանածոյի հորատահանուկի գծային ելքը պետք է կազմի 80-85 %:

Նախատեսվում է կատարել օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական քիմիական, պետրոգրաֆիկան ուսումնասիրություններ: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով նախատեսվում է յուրաքանչյուր հորատանցքից վերցնել մինչև 5.0 մ երկարությամբ հանուկային նմուշներ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացում վերցված բոլոր 62 նմուշները /49 հանուկային, 1 ակոսային, 4 ստուգիչ, 4 քիմիական և 4 պետրոգրաֆիական հետազոտությունների համար/ կենթարկվեն լաբորատոր հետազոտությունների:

Պետրոգրաֆիական և քիմիական ուսումնասիրությունները կկատարվեն ՀՀ ԳԱԱ երկրաբանական ինստիտուտում, ֆիզիկամեխանիկական փորձարկումները՝ լիցենզավորված լաբորատորիաներում:

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում նախատեսվում է հորատման 18 հարթակների շինարարություն: Հորատման հարթակների մակերեսն ընդունվում է 40 մ², ընդհանուր ծավալը կազմում է՝ 40մ x 18մ=720 մ³:

Հորատահրապարակների կառուցման համար ընտրված տարածքներում հողաբուսական /համաձայն դաշտում կատարված նախնական դիտարկումների տվյալների /լանջային փուխր նստվածքների հզորությունը հողաբուսական նյութի խառնուրդով կազմում է 0,22 մ, այդ թվում հողաբուսական շերտի միջինը 0.10 մ է /շերտը առկա է տեղամասի հորատման համար նախատեսված տարածքների շուրջ 40% մակերեսում, հարթակների վերականգնման ենթակա ծավալը կկազմի՝ 720 մ³ x0,10 մ x40 % =28.8 մ³:

Հայցվող հանքերևակման տարածքում ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ:

Ծրագրով նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, քանի որ տեղանքում կան հանդամիջյան գրունտային ճանապարհներ, որոնք բարենպաստ են և ընկերությունը կօգտվի այդ ճանապարհներից: Անհրաժեշտության դեպքում իրականացվելու են ճանապարհների վերանորոգում:

Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 378 մ² /հորատահրապարակներ - 288 մ², փորձնական բացահանք 90 մ²/: Վերականգնման ենթակա հողաբուսական ծածկի ծավալը կկազմի 37,8 մ³ /հորատահարթակներ – 28.8 մ³, փորձնական բացահանք – 9 մ³/:

Այդ ծավալները կարճաժամկետ կուտակվելու են խախտված տարածքների անմիջական հարևանությամբ առանձին-առանձին և աշխատանքների անմիջապես ավարտից հետո ամբողջությամբ օգտագործվելու են խախտված հողատարածքների վերականգնման համար:

Հետախուզական աշխատանքների ավարտից հետո նախատեսված է կատարել հորատման հարթակների և փորձնական բացահանքի ռեկուլտիվացիա: Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հորատման հրապարակների և փորձնական բացահանքի անցման ժամանակ հանել հողի շերտը (0.1 մ հզորությամբ 37.8 մ³) պահպանել հորատահարթակների անմիջական հարևանությամբ մինչև ռեկուլտիվացիոն

աշխատանքները: Հորատման հրապարակները վերականգնվելու են հորատման աշխատանքներից, հանուկի երկրաբանական փաստագրումից, ֆոտո-փաստագրումից և նմուշարկումից անմիջապես հետո: Ռեկուլտիվացման աշխատանքները կատարվելու են ձեռքով: Վերականգնման աշխատանքները նախատեսված են իրականացնել տեխնիկական և կենսաբանական փուլերով:

Երկրաբանական ուսումնասիրությունների դաշտային աշխատանքները՝ ըստ ներկայացված ժամանակացույցի, տևելու են երեք եռամսյակ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատաքնների ժամանակ կպահանջվի խմելու ջուր (0.25 մ^3) և տեխնիկական ջուր (75 մ^3): Խմելու և կենցաղային ջուրը նախատեսվում է ստանալ «Վելոիա ջուր» ՓԲԸ-ից ջրատար ավտոտրանսպորտով՝ պայմանագրային հիմունքներով:

Աշխատանքների ժամանակ առաջացող թափոնները (բանեցված քսայուղեր, նավթամթերքի մնացորդներ, հորատման թագիկներ, կենցաղային թափոններ, մակաբացման ժամանակ հեռացվող հողաբուսական շերտ) հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և սահմանված կարգով հեռացվելու են աղբահավաք կետեր:

Աշխատակիցների կենցաղային (հանդերձարան, ջրցուղարան), հանգստի և սնունդ ընդունելու պայմանները ապահովելու համար տեղամասում տեղադրվելու է վագոն-տնակ:

Հաշվետվությունում ներկայացվել է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և մշակվել են միջոցառումների ծրագիր՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմանն ուղղված մշտադիտարկումներ, թափոնների կառավարմանն ուղղված միջոցառումներ՝ իրականացման ծախսերով:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Շիրակի մարզպետարանը, Անիի համայնքապետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց առաջարկությունները և դիտողությունները ևս հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում:

Գնահատման և փորձաքննության փուլերում օրենսդրությամբ սահմանված կարգով Անի համայնքի Գուսանագյուղ բնակավայրում իրականացվել է 2 (երկու) հանրային լսում: Նախատեսվող գործունեության իրականացումը հանրային քննարկման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Ապահովել մշտադիտարկումների իրականացումը՝ «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության

կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման համաձայն:

- Մշտադիտարկամն արդյունքներով պայմանավորված՝ գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշման պահանջներով:
- Ապահովել Հաշվետվությամբ ամրագրված լանդշաֆտային ամբողջականության՝ խախտված տարածքների վերականգնման աշխատանքների իրականացումը:
- Առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով՝ գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ա. Գ. Ա. Սթոն» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Շիրակի մարզի Գոլսանագյուղի տուֆերի երևակման տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությամբ ներկայացված նախատեսվող գործունեությանը տրվում է դրական եզրակացություն՝ եզրակացությամբ ամրագրված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան